ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Տեառնընդառաջը՝ 40-օրյա Քրիստոսի ընծայումը տաճարին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Տեառնընդառաջի Ս. Պատարագից հետո հայոց եկեղեցիներում տեղի ունեցավ նաև նորապսակների օրհնության կարգ:

Տոնի նախօրեին, փետրվարի 13-ին, Մայր Աթոռի Միածնաէջ Տաճարում, երեկոյան ժամերգության ավարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Տերունի տոնի սկիզբն ավետող նախատոնակի հանդիսավոր արարողություն, ապա նաև անդաստանի կարգ, երբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը: Շարականների երգեցողության ներքո բարեպաշտ բազում հայորդիներ Մայր Տաճարի կանթեղներից վառված մոմեր իրենց հարկերը տարան՝ լուսավորելու Քրիստոսի խորհրդանիշ լույսով:

Փետրվարի 14-ին Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը, մեկնելով քառասնօրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման խորհուրդը, անդրադարձավ նաև մանուկների հանդեպ ծնողների պարտականություններին՝ նկատելով, որ առաջին հերթին նրանք պետք է մանուկներին Աստծո Խոսքի՝ Սուրբ Գրքի ճանաչողությունը մատուցեն և աղոթական կյանքին մասնակից դարձնեն, քանզի դրանցով մանուկները պիտի դառնան քրիստոնյաներ և դրանցով պիտի ժառանգորդներ դառնան հավիտենական կյանքի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ